



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 92

ԱՐԴԻԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻԻՆԸ

Ինչ լաւ է գոհութիւն մատուցանել քեզի, Տէր,  
եւ ներբողել քու անունդ, ո՛վ Բարձրեալ:  
Ամէն առաւօտ քու սէրդ պատմել,  
եւ գիշերները հաւատարմութիւնդ հոչակել՝  
տասնալար նուագարանով ու տաւիղով,  
եւ քնարի նուագակցութեամբ:  
Գործերովդ զիս ուրախացուցիր, ո՛վ Տէր,  
ըրածներդ տեսնելով՝ ցնծութեամբ կ'երգեմ:  
Ինչքան մեծ են գործերդ, Տէր,  
ինչքան խորունկ են քու խորհուրդներդ:  
Արդարները պիտի ծաղկին արմաւենիի նման,  
պիտի աճին Լիբանանի մայրիներու պէս:  
Տիրոջ տան մէջ պիտի տնկուին,  
մեր Աստուծոյն տանարին մէջ պիտի բուսնին:  
Նոյնիսկ ծերանալէ ետք պտուղ պիտի տան,  
պիտի մնան կորովալից ու մշտաթարմ,  
որպէս վկայութիւն՝ թէ ուղիղ է Տէրը, իմ Վէմս,  
եւ անոր քով անարդարութիւն չկայ:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ԱՍՏՈՒԿԾ ԱԲՐԱՀԱՄԸ ԿԸ ՓՈՐՉԷ (22:1-19)**

Աբրահամի հաւաքքի ճանապարհորդութիւնը կը շարունակուի: Աստուծոյ հրաւերին ընդառաջելով Աբրահամ ճամբայ ելաւ երթալու ու ժառանգելու այն երկիրը, առանց գիտնալու թէ ուր կ'երթայ, որ Տէրը իրեն ցոյց պիտի փայտ: Այդ ճանապարհորդութեան ընթացքին Աբրահամ հանդիպեցաւ փեսակ փեսակ դժուարութիւններու, բայց միշտ պահելով իր հաւաքարմուծութիւնը հանդէպ Աստուծոյ: Կարծէք այդ փորձութիւններուն զագաթնակէտն էր այս հապուածի դրուագը՝ Իսահակի գոհագործումը, որով Աստուած կ'ուզէր փորձել Աբրահամը: Միթէ Աստուած չէր գիտէր: Արդեօք կարիքը կա՞յ այդ փորձին, մանաւանդ երբ Աստուած ամենագէտ է:

Երբ կը կարդանք Ծննդոց 9րդ գլուխ, այն փեղ Աստուած խստիւ կ'արգիլէր մարդկային արիւն թափելը, ապա ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ այսպէղ Աբրահամէն կը պահանջէ մէկ հապիկ զաւակը զոհ մատուցանելու: Ընդհակառակը, այս հապուածով Աստուած կ'ուզէր ցոյց փայտ, որ Ինք մարդկային զոհ չի պահանջեր:

Երկրորդ, Աստուած Ինք է որ ցոյց կու տայ թէ ուր պէտք է կատարուի այդ գործը: Մորիա լեռան վրայ: Հեղափոխականօրէն, Հին Կտակարանին մէջ կը նշուի թէ Մորիա լեռան վրայ է որ կը կառուցուի Երուսաղէմի փառաքը, որ յետագային նաեւ պիտի կոչուէր Սիոն լեռ: Տակաւին, Տաճարի կողքին, քաղաքի պարիսպէն անմիջապէս դուրս, Քրիստոսի խաչելութեան վայրն էր: Ահա երեք վայրեր, որոնք կը նոյնանան՝ Իսահակի գոհագործման, Տաճարի եւ Քրիստոսի խաչելութեան վայրերը: Սա կը նշանակէ Աստուած Ինք սկիզբէն արդէն կը ճշդէ այն վայրը ինչ որ յետագային փեղի պիտի ունենար Քրիստոսի գոհագործումը մարդկութեան փրկութեան համար: Այս հապուածը նաեւ հեղափոխական համեմատութիւն է մեզմասին կու տայ Աբրահամի եւ Իսահակի կապը, որպէս Հօր Աստուծոյ եւ Քրիստոսի կապին: Սկսելով.

«Հիմա քու սիրած մէկ հապիկ որդիդ Իսահակը առ ու Մորիայի երկիրը գնա եւ հոն զանիկա ողջակէզ ըրէ լեռներէն մէկուն վրայ, որ ես քեզի պիտի ցուցնեմ»: Սիրած մէկ հապիկ որդիդ Իսահակը: «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին փոխաւ» (Յովի 3:16): «Այս է իմ սիրելի որդիս որուն հաճեցայ» (Մարթ 3:17): Մի գուցէ դժուար առաջարկ էր, բայց երբ Աբրահամ իբրեւ մարգարէ ճանչցուած էր (Ծննդ 20:7), հետեւաբար գիտէր նաեւ Աստուծոյ ծրագիրը, սպոր համար ալ Պօղոս Առաքեալ կը գրէ. «Հաւաքքով էր որ Աբրահամ զոհ մատուցանեց Իսահակը, երբ Աստուած զինք կը փորձէր: Մատուցանեց իր մէկ հապիկ զաւակը, հակառակ այն իրողութեան՝ որ անոր համար խոստում ստացած էր: Աբրահամ նկատու առաւ, որ Աստուած մեռելներէն ալ կրնայ յարուցանել Իսահակը. ուստի իբրեւ մեռելներու յարութեան օրինակ՝ եղ ստացաւ իր զաւակը» (Եբր 11:17-19):

«Աբրահամ առտուն կանուխ ելաւ ու գնաց այն փեղը որ Աստուած իրեն ըսաւ»: Աբրահամ նստելով չմտածեց, կամ որեւէ մէկուն խորհուրդը չհարցուց, երթամ կամ ոչ, ի՞նչ կ'ըսէք: Ընդհակառակը, առտուն կանուխ ելաւ եւ գնաց, եւ ան ալ երկար ճամբորդութիւն մը եւ բարձր լեռ մը: Ահա աշիթ ներքին պայքարի, սէր Աստուծոյ նկատմամբ եւ սէր անձին նկատմամբ: Միւս կողմէ, ոչ թէ պարզապէս հեռու փեղ մը, այլ նաեւ բարձր փեղ մը, որպէսզի հրաժարի երկրաւորէն իր հայեացքը կեդրոնացնելու երկնայինին:

«Երրորդ օրը Աբրահամ իր աջերը վեր վերցուց ու հեռուէն փեսաւ այն փեղը»: Երրորդ օրը խորհրդանիշ Երրորդութեան, յարութեան: Բայց Աբրահամ հեռուէն փեսաւ այն փեղը, ո՞ր փեղը: Այն փեղը, որ նաեւ Քրիստոս ինք պիտի խաչուէր: «Դուք հոս կեցէք, եւ ու փղան երթանք երկրպագութիւն ընենք եւ նորէն ձեզի դառնանք»: Ծառաները չէին կրնար Աբրահամի հետ բարձրանալ: Անոնք հոն մնացին: Բայց արդեօք Աբրահամ ճշմարտութիւնը կ'ըսէր, թէ կը խաբէր: Ինչպէս կարելի է երթալ զոհ մատուցանել, եւ յետոյ ըսել եւ ու փղան նորէն ձեզի կը վերադառնանք: Ահա այս իսկ է յարութեան յոյսը: Եթէ երբեք Աստուած մեռած, անկեղան արգանդէն զաւակ չնորիեց, նոյնպէս ալ կրնայ մեռելներէն յարուցանել: Այս բաժնին մէջ ծառաները կը խորհրդանշեն Իսրայէլի ժողովուրդը, որոնք չհաւաքացին Քրիստոսի: Մացառներէն բռնուած խոյը Քրիստոսը: Զոհի փայտերը Իսահակի ուտելուն Քրիստոսի խաչափայտը:

«Աստուած իրեն համար ողջակէզ ըլլալու գառը պիտի պատրաստէ»: Աբրահամ վստահութիւնը ունի, որ Աստուած ինք պիտի պատրաստէ ողջակէզ ըլլալիք զոհը: Ոչ միայն այս անգամուան համար, այլ նաեւ զայիք զոհը՝ Քրիստոսը մեր մեղքերուն քաւութեան համար: Իսկ այսօր մենք որքանով մեր զաւակները կ'ընծայենք Աստուծոյ, այս անգամ ոչ որպէս զոհ, այլ իբրեւ անուշահոտ խոնկ:

«Աբրահամ փղուն ձեռք մի դպցնէր, հիմա գիտցայ թէ Աստուծմէ կը վախնաս, որովհետեւ մէկ հապիկ որդիդ ինձմէ չխնայեցիր»: Միթէ Աստուած չէր գիտէր, թէ Աբրահամ Աստուծմէ կը վախնայ թէ ոչ: Աստուած գիտէր ամէն ինչ, բայց այսպէղ արձանագրուած է այս դէպքը մեզի համար, որպէսզի մենք եւս մեր հաւաքքը ամբողջացնենք գործով: Միւս կողմէ, որքանով պատրաստ ենք փեղի փայտ, չխնայելու Քրիստոսի սէրը շահելու համար: Տակաւին Իսահակին մէջ կ'երեւի Քրիստոսի աստուածութիւնը, իսկ խոյը՝ Քրիստոսի մարդկային բնութիւնը: Աստուած ուրիշ բան չուզէր եթէ ոչ միայն մեր անկեղծ հոգիները, չվախնանք Աստուծոյ երթալու, Աստուծոյ ուզածը Իրեն ընծայելու, որովհետեւ խորքին մէջ Ինք այդ բոլորին կարիքը չունի, երբ կը պատրաստուինք Իրեն ընծայելու եւ ընծայուելու, Ինք արդէն պատրաստ է Իր սիրելի Որդին մեզի փայտ:

«Քեզ օրհնելով պիտի օրհնեմ»: Արդեօք այս բոլորը նախապէս չէ՞ր փրուած: Ինչն է նոր այս խոստումին եւ օրհնութեան մէջ: Առաջին խոստումը փրուած էր երկրէն, իսկ երկրորդը՝ երկինքէն: Միւս կողմէ, փրուած խոստումին անփոփոխելիութիւնը, եւ այս անգամ երդումով: Հետեւաբար, որպէսզի կարենանք խոստումին արժանաւ ամբողջութեամբ, պէտք է նաեւ երկրաւորէն երկնաւորին անցնիլ, այսինքն՝ մարմնաւորէն հոգեւորին: